Նարե Պետրոսյան
էլ. Փոստ՝ hetq.mom@gmail.com
Հեռախոսահամար՝ +374 94 74 94 76

«Սիվիլիթաս» հիմնադրամի տնօրեն Աբրահամ Պողիկեանին,
Հեռ.՝ +374(10)500-119
Էլ. փոստ՝ info@civilnet.am

Տեղեկատվության հարցում «Մեդիայի սեփականության մոնիտորինգ - Հայաստան» հետազոտության շրջանակում

Հարգելի՛ պարոն Պողիկեան,

Ես Նարե Պետրոսյանն եմ, Ձեզ գրում եմ «Հետքի» և «Մեդիայի գլոբալ ռեգիստր» (Global Media Registry) կազմակերպության անունից՝ Հայաստանի մեդիայի ոլորտում թափանցիկության ապահովմանը միտված հետազոտությանն աջակցելու խնդրանքով:

Մենք իրականացնում ենք «Մեդիայի սեփականության մոնիտորինգ - Հայաստան (Media Ownership Monitoring - MOM Armenia) ծրագիրը՝ Կովկասի տարածաշրջանում մեդիայի սեփականության և բազմակարծության առաջին համապարփակ ուսումնասիրությունը: «ՍիվիլՆեթն» ընդգրկվել է Հայաստանի առաջատար 40 ազդեցիկ լրատվամիջոցների ցանկում՝ հիմնված լսարանի մեծության և տեղեկատվական բովանդակության վրա: Այդ պատճառով էլ դիմում ենք ձեզ:

Մեդիայի սեփականության մոնիտորինգը միջազգային հետազոտական նախաձեռնություն է, որը փաստագրում է մեդիայի սեփականության կառուցվածքը՝ գնահատելու բազմակարծությունն ու մեդիայի կենտրոնացումը: 2015 թվականին սկզբնապես մշակված լինելով «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության կողմից՝ ծրագիրն այժմ իրականացնում է Global Media Registry գերմանական ոչ առևտրային հասարակական կազմակերպությունը: MOM-ը իրականացվել է ավելի քան 30 երկրներում, ներառյալ՝ Մոլդովան, Գերմանիան, Իռլանդիան, Ալբանիան, Բոսնիա և Հերցեգովինան, Շրի Լանկան և Բրազիլիան: «MOM Հայաստան» հետազոտությունը ֆինանսավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարության «Քաղաքացիական հասարակության համագործակցություն» ծրագրի կողմից: Նախագիծը կավարտվի 2025 թվականի հոկտեմբերին, և հավաքված տեղեկատվությունը հասանելի կլինի անգլերեն և հայերեն, գլոբալ հարթակում:

Մեդիայի սեփականության թափանցիկությունը կարևոր է բազմակարծության ապահովման և կարծիքների բազմազանության պաշտպանության համար: Նույնիսկ այն դեպքերում, երբ համապատասխան օրենսդրություն գոյություն չունի կամ գոյություն ունի, բայց պատշաճ կերպով չի գործում, մեդիայի սեփականատերերը պետք է պրոակտիվ կերպով ներկայանան այն լսարանին, որին ծառայում են: Այս

ուսումնասիրությունը կբարձրացնի մեդիայի թափանցիկության աստիճանը լայն հանրության համար և կտեղեկացնի Հայաստանում մեդիայի սեփականության ներկա վիճակի մասին:

«MOM-Հայաստան» հետազոտության շրջանակում կվերլուծվի տպագիր, առցանց, ռադիո և հեռուստատեսության 40 ամենաազդեցիկ մեդիա կազմակերպությունների սեփականության կառուցվածքը: Մեր հետազոտության արդյունքները կներկայացնենք 2025 թվականի հոկտեմբերի վերջին Երևանում կայանալիք կոնֆերանսի ժամանակ:

Կարծում ենք, որ Դուք, որպես «ՍիվիլՆեթի» ներկայացուցիչ, կարող եք զգալիորեն նպաստել մեր նախագծին մասնագիտական փորձագիտությամբ և տեղեկատվությամբ:

- Կարո՞ղ եք տրամադրել ձեր ընկերության կամ սեփականության կառուցվածքի ամփոփ նկարագիրը, եթե այդպիսի փաստաթուղթ գոյություն ունի:
- Խնդրում ենք տրամադրել այն տվյալները, որոնք չենք կարողացել գտնել բաց աղբյուրներում կամ որոնք ունեն հստակեցման կարիք,

մասնավորապես՝

1. Խնդրում եմ տրամադրել «Սիվիլիթաս» հիմնադրամի 2024 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունից տեղեկություններ ընդհանուր եկամտի, գովազդից ստացված եկամտի և ընդհանուր ծախսերի մասին:
2. Խնդրում եմ նշել՝ քանի աշխատակից ունի լրատվամիջոցը նամակին պատասխանելու պահի դրությամբ:
3. Ըստ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր ներկայացված իրական շահառուների հայտարարագրի՝ ԱՄՆ քաղաքացի Միհրան Մինասյանը «Սիվիլիթաս» հիմնադրամի իրական շահառուներից մեկն է: civilnet.am-ում նա ներկայացվում է նաև որպես հոգաբարձուների խորհրդի նախագահ: Խնդրում եմ տեղեկություններ տրամադրել նրա գործունեության վերաբերյալ:
4. Խնդրում եմ տեղեկություններ տրամադրել նաև ԱՄՆ Գլենդել քաղաքի գրասենյակի ու դրա գործունեության վերաբերյալ:

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու 2025 թվականի հոկտեմբերին կայանալիք կոնֆերանսին՝ քննարկելու արդյունքները տարբեր շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ՝ հրատարակիչներ, հեռարձակողներ, լրագրողներ, կարգավորող մարմինների ներկայացուցիչներ և քաղաքականություն մշակողներ: Կոնկրետ օրվա մասին կտեղեկացնենք լրացուցիչ:

Թեև մեր ուսումնասիրության մեջ հիմնականում օգտագործվում են հրապարակայնորեն հասանելի տվյալներ, մենք նախապատվություն ենք տալիս առաջնային աղբյուրներին՝ ճշգրտության համար: Մենք կարծում ենք, որ այս տեղեկատվության տրամադրումը ոչ միայն հանրային պարտավորություն է, այլև բխում է լրատվամիջոցների շահերից:

Այս նամակագրությունը և Ձեր պատասխանը, կամ պատասխանի բացակայությունը, կփաստագրվի և կցուցակագրվի մեր աշխատանքի թափանցիկության բաժնում: Ինչպես նշվեց, մեդիայի սեփականության ամբողջական մոնիտորինգը կիրապարակվի առցանց և կթարմացվի շարունակաբար:

Շնորհակալություն Հայաստանի մեդիայի թափանցիկությանը միտված ջանքերում ձեր ներդրման համար:

Հարգանքով,

Նարե Պետրոսյան

«Մեդիայի սեփականության մոնիտորինգ Հայաստան» ծրագրի թիմ՝ «Հետք» և Global Media Registry

Կապ: hetq.mom@gmail.com +374 94 74 94 76

Ուսումնասիրության կայք: www.mediaownershipmonitor.org